

ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
Ձեռագրագիտության բաժնի ավագ գիտաշխատող
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Բան. գիտ. թեկն., դոցենտ
lilit_hovsepian@mail.ru

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
Ձեռագրագիտության բաժնի ավագ գիտաշխատող
Բան. գիտ. թեկնածու
tatevm0505@gmail.com

**Ի՞ՆՉ ԵՆ ԹԱՔՑՆՈՒՄ ԶԵՌԱԳՐԵՐԸ.
«ՄԻՈՆ» ԱՄՍՍԱԳՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՄԻ ԶԵՌԱԳՐԻ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ¹**

Ամփոփում

Գր. Մաքսուդյանը «Միոն» ամսագրում 1968 թ. հրատարակում է միջնադարյան Արծկեի ձեռագրական ժառանգությունը լրացնող՝ 1311 թ. «Արծկեու անապատում» Հովհաննես գրչի ընդօրինակած մի ձեռագրի նկարագրություն՝ «Նորահայտ հայերեն ձեռագիր մատեան մը յԱմերիկա» խորագրով: Ձեռագիրը պարունակում է Սողոմոն Իմաստունի գրքերը՝ Առակները, Ժողովողը, Երգ երգոցը, Իմաստությունը և Գրիգոր Նյուսացու «Մեկնութիւն Երգ երգոցի» աշխատությունը: Հոդվածում քննության է ենթարկվում այս նկարագրությունը՝ որպես Արծկեի գրչական միջավայրն ուսումնասիրելու կարևոր՝ ձեռագրին համարժեք աղբյուր:

Հովհաննեսը 1317 թ. նույն՝ Արծկեի անապատում ընդօրինակում է այս ձեռագիրը (նույնն են հիշատակարանները, բովանդակությունը), որը Մաշտոցյան Մատենադարանի Հ^մ 76 գրչագիրն է: Արծկեի անապատի այս երկու գրչագրերի ձեռագրական և բնագրային համեմատական քննությամբ պարզվում է, որ երկու ձեռագրերի հիշատակարանները գրեթե նույնն են, սակայն տարբեր մասերում՝ թերի, ինչը թույլ է տալիս փոխլրացնել դրանք. արդյունքում պարզվում են նոր մանրամասներ թե՛ Հովհաննես գրչի, թե՛ ԺԴ. դարասկզբի Արծկեի գրչական միջավայրի վերաբերյալ. հայտնի են դառնում

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A277 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

գրչի աշխարհիկ և ազգականների անունները, որոնց մասին Հ^տ 76 ձեռագրի հիշատակարանում որևէ հիշատակություն չկա:

Հոդվածում կարևորվում է Սողոմոնի Առակները, Ժողովողը, Երգ երգոցը, Իմաստությունը առանձին ձեռագրով ընդօրինակված լինելու փաստը՝ որպես Աստվածաշնչի բնագրի ընդօրինակման յուրօրինակ երևույթ և հիմնավորվում է, որ այս բնագիրն ունի ուշադրության արժանի ընթերցումներ, որոնք բացակայում են Հովհ. Զոհրապյանի 1805 թ. տպագրած՝ հեղինակավոր համարվող Աստվածաշնչի ընթերցումների շարքում և կարող են իրենց նպաստը բերել Աստվածաշնչի քննական բնագրի կազմման ապագա աշխատանքներին:

Բանալի բառեր և արտահայտություններ. ձեռագրի նկարագրություն, Արծկեի անապատ, բնագիր, ձեռագրական կորուստներ, հիշատակարան, Աստվածաշնչի նախակիրիկյան խմբագրություն, «Միոն» ամսագիր, Գրիգոր Մաքսուդյան, Երգ երգոց, ընդօրինակություն:

Ներածություն

Անմնացորդ նվիրումով և զրկանքների գնով ստեղծված հայերեն ձեռագրերը հայ ժողովրդի պատմության և հնամյա հիշատակների խոսուն վկաներն են, որոնք ալան-թալանի ենթարկվելով՝ հայտնվել են աշխարհի տարբեր գրադարաններում, մասնավոր անձանց մոտ կամ պարզապես ոչնչացվել են. փոքրաթիվ ձեռագրեր են երջանիկ պատահականությամբ վերադարձվել իրենց բնօրրան. շատ շատերի գտնվելու վայրը ճշտելը, ձեռագրական կորուստների ամբողջական պատկերը ներկայացնելը հայագիտության հրամայականն է²:

Հայերեն ձեռագրերի նկարագրությունները սկսեցին հայտնվել հայագիտական պարբերականներում ԺԹ. դարակեսից³: Ուսումնասիրությունները ցույց են տալիս՝ որքան էլ ձեռագրական տարբեր

² Այս խնդիրների մասին տե՛ս **Սուրեն Գոլանճեան, Յովհաննես վարդապետ Հիսսեան, Բաբգեն աթոռակից կաթողիկոս Կիլիկեդեան, Գեորգ Տեր-Վարդանեան**, Եդեռնը եւ մեր ձեռագրերի կորուստներն ու փրկությունները, Հրատարակութեան պատրաստեց՝ Գեորգ Տեր-Վարդանեան, «Ձեռագրական մեր կորուստները եւ անելիքները», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2015:

³ Ձեռագրերի ուսումնասիրությամբ (նկարագրություն, հիշատակարանների արձանագրում, ցուցակների կազմում) զբաղվում էին Ս. Զալալյանցը, Մ. Սմբատյանցը, Եր. Լալայանը, Գ. Սրվանձտյանցը, Դ. Փիրդալեմյանը և այլք: Հ. Տաշյանի «Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա» (Հատոր Ա., **Կազմեց Հ. Յակովբոս Վ. Տաշեան**, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1895) աշխատությամբ հիմք դրվեց ձեռագրերի գիտական նկարագրությանը, որը որոշ լրացումներով կիրառվում է նաև այսօր:

հավաքածուների հայերեն ձեռագրերը համակարգված կերպով և մանրամասնորեն ցուցակագրվել կամ ցուցակագրվում են, այնուամենայնիվ պարբերական մամուլում ցրված մնում են նկարագրություններ, որոնք վրիպում են ուսումնասիրողի ուշադրությունից, մինչդեռ այդ նկարագրություններից յուրաքանչյուրը ձեռագրի արժեք ունի և կարող է ուսումնասիրության նոր դուռ բացել: Այդպիսի մի նկարագրություն գրավեց մեր ուշադրությունը «Սիոն» ամսագրում հրատարակված ձեռագրերի նկարագրություններն ուսումնասիրելիս:

Մեթոդաբանությունը

«Սիոն» ամսագրում հրատարակված՝ Արծկեի անապատում 1311 թ. ընդօրինակված ձեռագրի նկարագրության ձեռագրական, բնագրային քննությունն արվել է վերլուծական, քննական, համեմատական, համադրական մեթոդներով այնքանով, որքանով մեզ հնարավորություն տալիս են նկարագրության մեջ արտահայտված փաստերը: Մինչդեռ ձեռագրի ամբողջական ուսումնասիրությամբ հնարավոր կլինեք ավելին բացահայտել:

Դիպուկ է նկատել Մկ. Ավգերյանը՝ «Հոգատար կազմված ձեռագրացուցակը մի ամբողջ գրատուն է»: Այս տրամաբանությամբ ձեռագրերի ամեն առանձին նկարագրություն, հատկապես եթե բնօրինակը պահպանված չէ՝ կորուսյալ է կամ գտնվելու վայրը՝ անհայտ, ձեռագրի արժեք է ստանում:

1968 թ. Գրիգոր Մաքսուդյանը «Սիոն» ամսագրում հրատարակում է 1311 թ. «Արծկեու անապատում» Հովհաննես գրչի ընդօրինակված Սողոմոն Իմաստունի չորս գրքերը և Գրիգոր Նյուսացու «Մեկնութիւն Երզ երգոցի» երկը պարունակող ձեռագրի նկարագրություն (այսուհետև՝ Գր.Մաքսուդյան, նկարագրություն ⁴, որը վրիպել է ուսումնասիրողների ուշադրությունից⁵ և ներկայացվում է առաջին անգամ:

⁴ Տե՛ս Մաքսուդյան Գ., Նորահայտ հայերեն ձեռագիր մատեան մը յԱմերիկա. - «Սիոն», 1968, էջ 252-4: Ամբողջական նկարագրությունը՝ սույն հոդվածի վերջում:

⁵ Լ. Խաչիկյանը «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների» (Ե., 1950) հատորը կազմելիս այս նկարագրության մասին իմանալ չէր կարող: «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների» նոր հրատարակության մեջ (ԺԴ. դար, Մասն Ա (1301-1325 թթ.), Կազմողներ՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան, Ե., 2018 (Այսուհետև՝ Յիշք. ԺԴ., Ա.)) այս հիշատակարանը չի արտացոլվել: Ձեռագրիս հետագայի՝ 1641 թ. հիշատակարանը տե՛ս Հայերեն ձեռագրերի ԺԵ. դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.), Հատոր Գ., Կազմեց Վազգեն Հակոբյան, Ե., 1984 (այսուհետև՝ Յիշք. ԺԵ., Գ.), Հ^տ 72, էջ 46: Հայերեն

Ի՞նչ արժեք ունի այս նկարագրությունը և ինչ կարող է տալ ուսումնասիրողին.

Ձեռագրագիտական արժեքը.

ա. Գր. Մաքսուդյանի նկարագրած ձեռագիրը պահպանված է գրչության ժամանակի ու հետագայի հիշատակարաններով և ***լրացնում է Արծկեի գրչօջախի մասին մեր ունեցած ոչ այնքան առատ տեղեկությունները***⁶:

Արծկեն «Հայաստանի առավել դժբախտ այն անկյուններից էր, որտեղ ջարդերից փրկվեցին միայն եզակիները»⁷, ուստի այստեղից մեզ հասած ցանկացած մասունք Արծկեի պատմությունը լրացնելու հնարավորություն է: Ձեռագրի գրչության վայրը «Արծկեու անապատն է», որը Ս. Կարապետյանի կարծիքով «գտնվել է քաղաքի ծովային բերդի տարածքում»⁸: Հիշատակարաններում Արծկեի անապատի հետ նշվում են նաև քաղաքի նշանավոր վանքերը. «...*Գրեցի ըստ իմում կարողութեան, եւ կարգեցի ի դէմս քարտեւնի, ի գաւառիս Բզնունեաց կոչեցեալ՝ յանուանեալ անապատիս Արծկեու, սխրալի եւ պայծառ անուամբ շքեղացեալ, ընդ հովանեաւ սուրբ եկեղեցոյս, որ անուամբ յորջորջի Սուրբ Սիովն, եւ այլ սրբոց եւ Սուրբ Սքանչելագործի, եւ պայծառ անուամբ կենսաբեր Սուրբ Նշանի*»⁹:

բ. ***Ձեռագրիս հիշատակարանը հաղորդում է նորահայտ փաստեր Արծկեի գրիչ Հովհաննեսի մասին:*** Բարեբախտաբար Հովհաննես գրչի ձեռքով նույնությամբ ընդօրինակված է նաև Մաշտոցյան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) 1317 թ. Հ^մ 76 ձեռագիրը, որի ստացողն է Թադեոս արքեպիսկոպոս: Նույնն են երկու ձեռագրերի գրչության ժամանակի

ձեռագրական համահավաք ցուցակում նույնպես արտացոլված չէ. տե՛ս Bernard Coulie, *Armenian Manuscripts, Catalogues, Collections, Libraries*, 2nd Revised Edition, Turnhout, Brepols, 2020:

⁶ **Ա. Մաթևոսյան**, Արծկեի գրչության կենտրոն, «Հայկական սովետական հանրագիտարան», Հատոր 2, Արգիշտի-Գեղերվան, Ե., 1976, էջ 71: **Մ. Հասարայան**, Արծկեի Սքանչելագործ Ս. Նշան վանք, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Ե., 2002, էջ 153-154: **Ս. Կարապետյան**, Հայաստանի պատմություն, Հատոր Գ., Արծկե, Ե., 2018, էջ 90-93: Լ. Թումանյան, Վանա լճի կղզիների վանքերի գրչության կենտրոնները, Ե., 2019, էջ 73, 105-106, 260:

⁷ Արծկեի ահաաբստու կոտորածների մասին՝ Ս. Կարապետյան, Արծկե, էջ 20-40:

⁸ Նույն տեղում, էջ 95:

⁹ Գր. Մաքսուդյան, Նկարագրություն, էջ 253:

հիշատակարանները, բովանդակությունը¹⁰: Ցարդ գրիչ Հովհաննեսի գոյության մասին հայտնի էր միայն ՄՄ Հ^մ 76 ձեռագրի թերի հիշատակարանից¹¹: Այս երկու ձեռագրերի թերի հիշատակարանները հնարավոր է համադրել և ամբողջացնել **Հովհաննես գրչի մասին տեղեկությունները**:

Ըստ Գր.Մաքսուդյանի նկարագրության պարզում-լրացնում ենք հետևյալը՝

1.Արծկեի գրիչ Հովհաննեսի գրչության ժամանակը. ուստի **Արծկեի գրչօջախի ԺԴ.դ.գործունեության վաղագույն սահմանը ոչ թե 1317, այլ՝ 1311 թվականն է**:

Ուսումնասիրողները Արծկեի գրչօջախի ԺԴ. դ. մասին հիշատակում են չորս փաստ, որից երեքն¹² առնչում են այստեղ ընդօրինակված ձեռագրերին՝ «Մասունք Աստվածաշնչի» /Սողոմոնի գործերը/ (1317 թ., Արծկեի անապատ, գրիչ՝ Հովհաննես), Ավետարան (1319 թ., Արծկե Սուրբ Սքանչելագործ, գրիչ՝ Վարդան) և Ավետարան (1338 թ., Արծկեի անապատ, գրիչ՝ Հովհան): Այսպիսով՝ ըստ Գր.Մաքսուդյանի նկարագրության տվյալների, Արծկեի գրչօջախում ԺԴ. դ. ստեղծված ձեռագրերին ավելանում է ևս մեկը՝ «Մասունք Աստվածաշնչի» /Սողոմոնի գործերը/ (1311 թ., Արծկեի անապատ, գրիչ՝ Հովհաննես):

2. Հովհաննեսն աբեղա է, աշխարհիկ անունը՝ **Մելիքշահ**, ունի երեք եղբայր՝ **Սուքիաս, Անդրեաս, Շահմէլէք** (Սուքիասի և Անդրեասի

¹⁰ Գր. Մաքսուդյանի նկարագրության մեջ Գր. Նյուսացու «Մեկնութիւն Երգ երգոցի» բնագիրը չենք դիտարկում, քանի որ լրացված է այլ ձեռքով, հավանաբար՝ հետագայում:

¹¹ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Հատոր Ա., **Կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաքյան**, Խմբագրությամբ՝ Ա. Մնացականյանի, Օ. Եգանյանի, Ե., 1984, էջ 258: Յիշք. ԺԴ., Ա., Հ^մ 299, էջ 329-330: Հովհաննես գրչի մասին տեղեկությունները բացակայում են նաև հայերեն ձեռագրերի այլ ցուցակներում:

¹² Մեկն առնչվում է Մեծոփականքի գրչության կենտրոնին. 1313 թ. Մեծոփականքի Մխիթար գրիչը Բարսեղ աբեղայի համար Հովհաննես վարդապետի օժանդակությամբ ընդօրինակում է Ավետարան (ՄՄ Հ^մ 6273, էջ 122-123), որը **նվիրվում է** Արծկեի Սուրբ Սքանչելագործ վանքին. տես **Ա. Մաթևոսյան**, Մեծոփականքի գրչության կենտրոնը (ԺԲ.-ԺԵ. դդ.), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997, էջ 49, ծնթ. 46:

անունները՝ երկիցս), քրոջ անունն է **Թանգիսաթուն**, իսկ հոր անունը՝ հավանաբար՝ Լուսիկ¹³:

Այս և Արծկեում գրված մի քանի ձեռագրերից պարզում ենք նաև Արծկեի գրչօջախի այլ գործիչներին. երևում է՝ Արծկեի Սուրբ Սքանչելագործ վանքում ակտիվ գործունեություն է ծավալել Թադեոս արեղան: Նա ստացել է Արծկեի երկու ձեռագիր՝ վերոբերյալ ՄՄ Հ^մ 76-ը¹⁴ և երկրորդը՝ Վարդան գրչի՝ 1319 թ. Արծկեում ընդօրինակած ՄՄ Հ^մ 4125 Ավետարանը: Այս ձեռագրի հիշատակարանը հայտնում է ումն Բարսեղի մասին, որը թե՛ օրինակ շնորհողն է, թե՛ ստացողի խորհրդատուն¹⁵:

Այսպիսով՝ 1310-20ական թթ. Արծկեի գրչական միջավայրը մեզ ներկայանում է նոր փաստերով. Թադեոս ստացողը երկիցս պատվիրել է ձեռագրեր, Բարսեղ կրոնավորը՝ շնորհել, ստացել են մատյան Մեծոփավանքի հայտնի գրչօջախից: Հովհաննես գրիչն իր ազգականներով, Թադեոս ստացողը, Բարսեղ օրինակ շնորհողը Արծկեի գրչօջախի գործիչներ են, որոնց միջոցով հնարավոր կլինի հետազայում (հուսանք՝ այդպիսի ձեռագրեր կհայտնվեն) նույնականացնել և պարզել Արծկեի գրչակենտրոնի հետ կապված, սակայն տեղի կամ ժամանակի

¹³ Գր. Մաքսուդյանը հիշատակարանի «*լուսիկ*» բառն ընկալել է որպես գրչի հանգուցյալ ծնողների բնորոշում («լուսավոր» իմաստով) և վրիպել՝ ընդօրինակելով փոքրատառով: Հայտնի է՝ ձեռագրերում հատուկ անունները գլխատառով չեն գրվել: ԺԴ. դարում *Լուսիկ*-ը տարածված էր որպես արական անուն, իսկ քանի որ գրիչները սովորաբար սկզբից հանվանե հորն էին հիշատակում, ուստի ենթադրեցինք, որ դա գրչի հոր՝ *Լուսիկ* անունն է: Համապատասխանաբար բնագրում սրբագրել-դարձրել ենք հատուկ անուն. տե՛ս հոդվածիս ծնթ. 47: Լուսիկ անվան մասին՝ Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Հատոր Բ., Երևան, 1944, էջ 440:

¹⁴ Յիշք. ԺԴ., Ա., էջ 330. «Ո՛վ մանկունք Նոր Սիովնի... եւ զսոյն ընդունիք, եւ զառաջասացեալ՝ զԹադէոս արեղայս, որ փափաքանաւք եւ լի հոգով եւ յաւժարութեամբ մտաւք ստացաւ զտառս Աստուածայշունչս...»: Ընդգծված «զառաջասացեալ» բառը հուշում է, թե ստացողի մասին գրիչն արդեն հիշատակել է, բայց սա Թադեոս ստացողի մասին հայտնող միակ հիշատակարանն է: Ձեռագրում կան գրչի կողմից դատարկ՝ չգրված, գուցե, ստացողի հիշատակարանը լրացնելու համար թողնված տեղեր, որոնք պիտի լրացվեին ստացողի հիշատակարանով: Քիչ հավանական ենք համարում, թե գրիչը նկատի ունի իր ընդօրինակած այլ ձեռագրում Թադեոսի անվան հիշատակումը:

¹⁵ Նույն տեղում, Հ^մ 333, էջ 373-4. «...Ընդ հովանեաւ Սուրբ զՍքանչելագործիս, յառաջնորդութիւն տեղոյ Սիմէոն արեղաի, ի ստացումն սրբազան քահանայի **Թադէ[ոսի]**... եւ խորհրդակցի սորին՝ **Բարսէի սրբազան եւ ծիր արեղայի** ողորմեա՛, Տէր Քրիստոս»:

հիշատակություն չունեցող նորահայտ ձեռագրեր, և կամբողջանա Արծկեում գրչության գործի կազմակերպման ընթացքը:

գ. Ձեռագրի պատմությունը չի սահմանափակվում միայն ստեղծվելու և շրջանառության մեջ դրվելու փաստով. գրչագրի ճակատագրով անհանգիստ հետագա ստացողների, նորոգողների, փրկողների, նվիրատուների ջանքն ու աշխատանքը նույնպես ձեռագրի պատմության ուշադրության արժանի մաս են: Ձեռագիրս 1641 թ. նորոգվել-կազմվել է Եղեսիայում՝ ձեռամբ Պետրոս քահանայի՝ «ի վայելումն Աւետիք դպրին»՝ որպես հիշատակ «ցանկալի և բաղձալի Պաղտասար քահանային» Եղեսիայի Բարձրահայաց Սուրբ Աստվածածին եկեղեցում: Հասկանալի է՝ դժվար է վերհանել մի ձեռագրի դեգերման պատմությունը, որը վաղուց կորցրել է իր նախկին պատկանելության հետքերը: Չունենք տեղեկություն և պնդել չենք կարող, որ ձեռագիրը գրվելուց հետո մնացել է Արծկեում¹⁶: Իսկ մատենագիտական որևէ նշում Գր.Մաքսուդյանի նկարագրության մեջ, ցավոք, արտացոլված չէ¹⁷: Նկարագրությունից դժվար է հստակ եզրակացնել, սակայն չենք էլ բացառում, որ ձեռագրի՝ Գրիգոր Նյուսացու «Մեկնութիւն Երգ երգոցի» աշխատությունն ընդօրինակել է ոչ թե Հովհաննես գրիչը (նկարագրությունից պարզ է, որ դա արված է այլ ձեռքով), այլ ավելացվել է նորոգման ժամանակ: Եղեսիայի Ս. Աստվածածին վանքում գործող Պաղտասար կազմարարի մասին հաղորդում է 1650 թ. ՄՄ Հ^մ 1420¹⁸ ձեռագիրը: Այս ձեռագրի մասին, ցավոք, հիշատակություն չկա նաև Արամ Մահակյանի ստվարածավալ ուսումնասիրության մեջ¹⁹, որը հյուսված է Եղեսիայում գրված կամ նրա հետ առնչվող ձեռագրերի և արխիվային փաստաթղթերի հիման վրա: Ուստի այս հարցի լուսաբանումը թողնում ենք հետագա ուսումնասիրողներին:

¹⁶ Այս տվյալներով մեզ չհաջողվեց գտնել որևէ այլ տեղեկություն նաև Ղ. Փիրդալեմյանի և Օ. Բարադամյանի ընդօրինակած հիշատակարանների ձեռագրերում (ՄՄ Հ^մ 6333, 6273, 4515 նկարագրողներ՝ Ձեռագրագիտության բաժնի ավագ գիտաշխատող, ա. գ. թ. Դավիթ Ղազարյան, գիտաշխատող Հասմիկ Իրիցյան, նախկին գիտաշխատող Անի Թիլիքյան: Նկարագրություններն անտիպ են և կիրատարակվեն «Մայր ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի» համապատասխան հատորներում):

¹⁷ Տեղին էր երջանկահիշատակ մեր ուսուցիչ, պ.գ.դ. Գեորգ Տեր-Վարդանյանի պնդումը, թե հետագա նշումները որքան կարևոր են ձեռագրի պատմության բոլոր օղակները բացահայտելու համար:

¹⁸ Յիշք. ԺԷ., Գ, Հ^մ 620, էջ 389:

¹⁹ Դիւցազնական Ուրֆան եւ իր հայրդիները, Աշխատասիրեց՝ **Արամ Մահակեան**, Վերահրատարակութիւն, Անթիլիաս, 2014:

Բնագրագիտական արժեքը.

գ. Սողոմոն Իմաստունի գրքերը միջնադարում սիրված են եղել և հաճախ ընդօրինակվել են առանձին՝ Աստվածաշնչի բնագրի մի առանձին, անկախ խումբ կազմելով: Ն. Ակինյանն այս մասին անում է մի կարևոր դիտարկում. «...Նախնաբար Սողոմոնի Առակք, Բան Ժողովողի, Երգ երգոց եւ Իմաստութիւն անբաժան էին իրարմէ եւ մէկ հատոր կը կազմէին... Անոնք լիակատար Աստուածաշունչի մէջ ուրույն խումբ մը կը ներկայացնեն: Բայց կ'երեւայ, թէ յետոյ օրինակողները անդրադարձած են արտաքոյ այլազան ընթերցուածներուն եւ փորձած են ձուլել երկու խումբերը. երբ կամայական փոփոխութիւններ ալ տեղի ունեցած են: Բանասիրութեան գործը պիտի ըլլայ ձեռագրական համեմատութիւններով վերակազմել առաջին փութանակի թարգմանութիւնն իր մէջ եւ անոր սրբագրուած օրինակը առանձին»²⁰: Ի՞նչ պատկեր է ներկայացնում Գր.Մաքսուդյանի նկարագրության բնագիրը: Ճիշտ է, նկարագրության մէջ ամբողջական բնագիրն արտացոլված չէ. տրվում են միայն Սողոմոնի գործերի սկսվածքները և, թվում է, դժվար է ընդօրինակված բնագրի մասին դիտարկումներ անել, սակայն այս հարցում մեզ օգնում է ՄՄ Հ^մ 76 ձեռագիրը: Երկու ձեռագրերում ունենք գրչի համանման հիշատակումն առ այն, որ կիրառել է ստույգ գաղափար օրինակ. «Բայց գրեցաւ սա ի սաստիկ եւ յընդիւր արինակէ, ի վաղուց հետէ ստուգեալ եւ ճշմարտեալ ի նոյն պայմ|| (170բ) անի, բանիւք եւ բառիւք եւ տառիւ անթերի եւ անսղալ...»²¹: Հովհաննէսի՝ նույնությամբ ընդօրինակված երկու ձեռագրերը վկայում են, որ գաղափարվել են մեկ ընդհանուր «ընտիր» և հեղինակություն վայելող գաղափար օրինակից²²: Համեմատել ենք Առակաց գրքի և Երգ երգոցի մի քանի հատվածներ և ստացել հետևյալ պատկերը²³.

²⁰ Ն. Ակինյան, Սուրբ Գրքի հայերեն թարգմանությունը, «Հանդես ամսօրեայ», 10-11, 1935, էջ 561:

²¹ Յիշք. ԺԴ., Ա., էջ 330: Հմմտ. Մաքսուդյան, էջ 253:

²² ՄՄ Հ^մ 76 ձեռագիրն ունի մանրամասն գրչական սրբագրումներ:

²³ Ընթերցումներն արտահայտում ենք ընտրողաբար, քանի որ դրանք բավականին շատ են:

Գիրք/տուն /հմր.	ՄՄ Հ ⁴ 76 Գր. Մաքսուդյանի նկարագր. բնագիր	Աստուածաշունչ ²⁴
Առակ Ա. 19	Այս ճանապարհք են ամենեցուն, որ գործեն <i>զանօրէնութիւն...</i>	Այս ճանապարհք են ամենեցուն, որ գործեն <i>զանօրէնա...</i>
Առակ Ա. 31	Եւ ամբարշտութեամբ իւրեանց...	իւրեանց ամբարշտութեամբ...
Առակ Բ. 1	<i>զբան</i> պատուիրանի...	<i>զպատգամս</i> պատուիրանի...
Առակ Բ. 16	մի ժամանեցեն քեզ...	մի <i>հասցեն</i> քեզ...
Առակ Բ. 19	ոչ <i>դառնայցեն</i> անդրէն...	ոչ <i>դարձցին</i> ...
Երգ խորագիր	Երգ երգոց Սողոմոնի ²⁵	Երգ երգոց, որ է Օրհնութիւն օրհնութեանց, ասացեալ Սողոմոնի արքայի Իսրայէլի
Երգ Ա. 5	զի ես <i>սեւացեալ եմ...</i>	զի ես <i>սեւացեալ</i> <i>թխացայ...</i>
Երգ Ա. 5	<i>անտես արար զիս</i> արեգակն...	<i>խեթիւ հայեցաւ</i> ընդ իս արեգակն...
Երգ Ա. 6	<i>Միզուցէ լինիցիս</i> իբրեւ <i>զարդարեալ յերամակս</i> ընկերաց քոց...	<i>Գուցէ լինիցիս</i> իբրեւ <i>զընկեցեալն յերամակս</i> ընկերաց քոց...
Երգ Ա. 13	Ողկոյզ <i>ծաղկի</i> է եղբարորդին իմ ի մէջ <i>այգեստանւոյն</i> Ենգաղայ...	Ողկոյզ նոճոյ է եղբօրորդին իմ ի մէջ <i>այգեստանեացն</i> Ենգաղայ... ²⁶

²⁴ Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանց. ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ: Նորոգապէս ի լոյս ընծայեալ յընտրելագոյն գրչագիր գաղափարէ՝ համեմատութեամբ այլեւայլ օրինակաց հանդերձ կարելոր ծանօթութեամբք բնաբանին: Յաշխատասիրութենէ տեառն Հ. Յովհաննու Զօհրապեան վարդապետի, ի Վենետիկ, 1805. ՌՄԾԴ. (այսուհետեւ՝ Զօհրապեան, Աստուածաշունչ):

²⁵ «Երգ երգոցի» խորագրային տարբերեցումների մասին տես Լ. Հովսեփյան, Երգ երգոցը և Գրիգոր Նարեկացին, «Բանբեր Մատենադարանի», Հ⁴ 30, 2020, էջ 104-106:

²⁶ Զօհրապեան, Աստուածաշունչ, այս ընթերցումն այլ կերպ է:

Երգ Ա.15	Ահաւաղիկ <i>ես բարի,</i> <i>եղբարորդդ</i> իմ, այլեւ գեղեցիկ...	Ահաւաղիկ <i>կաս</i> <i>բարենշան եղբորորդեակ</i> իմ, այլ եւ գեղեցիկ
Երգ Ա.9	Ահաւասիկ սայ <i>եկեալ</i> <i>վազելով</i> ի վերա <i>լերանց</i> <i>խայտալով</i> ի վերա բլրոց...	Ահաւասիկ սայ <i>եկն վազս</i> <i>առնու</i> ի վերայ <i>լերանց</i> <i>խաղաղացեալ</i> ի վերայ բլրոց... ²⁷
Երգ Բ. 9	Ահաւասիկ սա եկաց <i>զկնի</i> որմոյն...	Ահաւասիկ սա եկաց <i>յայնկոյս</i> որմոյն...
Երգ Բ.14	Եւ եկ <i>աղանի</i> իմ... <i>մերձ</i> ի <i>պատուար</i> պարսպիդ...	Եւ եկ <i>դու աղանեակ</i> իմ... <i>առ պատուարաւ</i> պարսպիդ...
Երգ Բ. 14	<i>Յոյց ինձ գղեմս քո</i> եւ լսելի արա ինձ զբարբառ քո, <i>վասն</i> զի ձայն քո քաղցր է եւ <i>դէմք</i> քո գեղեցիկ...	<i>Երեւեցոյ ինձ զերեսս</i> քո եւ լսելի արա ինձ զբարբառ քո <i>զի բարբառ</i> քո քաղցր է եւ <i>տեսիլ</i> քո գեղեցիկ...
Երգ.Բ.15	աղուեստունս <i>փոքրկունս...</i> <i>զի</i> <i>այգիք մեր ծաղկեալ են...</i>	աղուեստունս մանրկունս... <i>եւ որթք մեր ծաղկէին...</i>

Վերը ներկայացվող ընթերցումներն իրենց եզակիությամբ հարում են Վիեննայի Մխիթարյան մատենադարանի Հ^տ 316 (ժամանակ՝ 1277-1307 թթ., պարունակում է Սողոմոնի գրքերը)²⁸ բնագրին և բարեխղճորեն արտացոլված են Հ. Ոսկյանի «Երգ երգոցի առաջին եւ երկրորդ թարգմանութիւնները» ուսումնասիրության մեջ որպէս ձեռագիր՝ D²⁹: Այս բնագրի որոշ ընթերցումներ համահունչ են նաև Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց մատենադարանի Հ^տ 1925 (ժամանակ՝ 1269)³⁰ Աստվածաշնչի բնագրի հետ:

²⁷ Նույն տեղում, այլ կերպ:

²⁸ Յուզակ Վիեննայի, հ. Ա, էջ 754:

²⁹ Հ. Ոսկեան, Երգ երգոցի առաջին եւ երկրորդ թարգմանութիւնները, Ուսումնասիրութիւն եւ բնագրեր, Վիեննա, 1925, էջ 6:

³⁰ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. վեցերորդ, Կազմեց **Նորայր եպս. Պողարեան**, Երուսաղեմ, 1972, էջ 401-416: ՄՄ դրսի ժապավեն, Հ^տ 8, էջ 776-780: Աստվածաշնչի բնագիրը Կիլիկյան շրջանում էական փոփոխությունների է ենթարկվել (ենթադրվում է՝ Ներսէս Լամբրոնացու կողմից). ա՛յդ տարբերակն է ընկած Հ. Զոհրապյանի տպագիր Աստվածաշնչի հիմքում: Երուսաղեմի Հ^տ 1925 ձեռագիրը ներկայացնում է Աստվածաշնչի՝ տակավին փոփոխությունների չենթարկված բնագիրը, ուստի և նրան հարազատ ընթերցումները գիտական արժեք

Եզրակացություն

Գր. Մաքսուդյանի նկարագրության և ՄՄ Հ^մ 76 ձեռագրի համեմատական քննությունը թույլ է տալիս անել հետևյալ դիտարկումները.

Հովհաննես գրչի՝ Արծկեի անապատում նույնությամբ ընդօրինակած երկու ձեռագրերի թերի հիշատակարանները փոխադարձաբար լրացնում են իրար, ինչի միջոցով պարզում ենք.

ա. Արծկեի գրչօջախում գործունեություն ծավալած գործիչների անուններ, որոնց միջոցով վստահորեն կարելի է նույնականացնել և պարզել Արծկեի գրչակենտրոնի հետ կապված, սակայն տեղի կամ ժամանակի հիշատակություն չունեցող ձեռագրեր:

բ. Արծկեի ԺԴ.դարասկզբի ժամանակային վաղագույն սահմանը ըստ Գր.Մաքսուդյանի նկարագրության 1311 թվականն է, ոչ թե ընդունված 1317-ը:

գ. Սողոմոն Իմաստունի գրքերն առանձին ձեռագրով ընդօրինակված լինելը թույլ է տալիս քննել այս բնագիրը որպես Աստվածաշնչի ընդօրինակության մի առանձին խմբի նմուշ, որն ունի եզակի՝ Հովհ.Զոհրապյանի 1805 թ.տպագրած Աստվածաշնչում բացակայող և հնության կնիք ունեցող ընթերցումներ:

դ. ՄՄ Հ^մ 76 ձեռագրի Սողոմոնի գրքերի բնագրի (ուստի և՛ Գր.Մաքսուդյանի նկարագրության բնագրի) եզակի ընթերցումները ցույց են տալիս Աստվածաշնչի նախակիլիկյան բնագրի հետքը և կարող են իրենց նպաստը բերել Աստվածաշնչի քննական բնագիրը կազմելու շնորհակալ աշխատանքին:

Որպես վերջաբան. ի՞նչ են թաքցնում ձեռագրերը. ամեն ձեռագիր՝ նկարագրություն, թե դարերի արհավիրքներով անցած և մեզ հասած մասյան, հաղորդում է իրեն ծնունդ տված, դարերով փայփայած հայ մարդու՝ գրագրի, ուսուցչի, վաճառականի, կազմարարի, գյուղացու կամ իշխանի նվիրական ջանքը՝ արձանագրել իր ապրածը և հայ գիրքը հասցնել եկող սերնդին: Այդ նվիրյալների մասին մեզ հասած ցանկացած նորահայտ վկայություն հայ մշակույթն ուսումնասիրելու, գնահատելու և նրանով հիանալու մի նոր հնարավորություն է:

ունեն և կարևոր են նախակիլիկյան սուրբգրային բնագիրը վերականգնելու հարցում: Այդ մասին տե՛ս **Լ. Հովսեփյան**, Երգ երգոցը և Գրիգոր Նարեկացին, «Բանբեր Մատենադարանի», էջ 104-106:

Նորահայտ հայերեն ձեռագիր մատեան մը յԱմերիկա³¹
(Նկարագրող՝ Գր.Մաքսուդյան, վերանկարագրող՝ Լ.Հովսեփյան)

**ԺՈՂՈՎԱԾՈՅ ԳՐՈՑՆ ՍՈՂՈՄՈՎՆԻ ԵՒ ԳՐԻԳՈՐԻ ՆԻՒՍԱՅԻՈՅ
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳ ԵՐԳՈՑԻ**³²

ԱՐԾԿԷ

ՉԿ.- 1311

ԳՐԻՉ՝ Յովհաննէս արքայ (Մէլիքշահ, թ.1-182), Անանո՞ւն (թ.183-214)
ՄԵՓԱԿԱՆԱՏԷՐ՝ Արշակ Տայեան (Դեթրոիդ, ԱՄՆ)³³:

ԹԵՐԹ՝ 214: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16.1x11.9x4: ԳՐՈՒԹԻՒՆ՝
Երկսին, միասին (183ա-214բ) : ԳԻՐ՝ բոլորգիր.խորագիրք եւ գլխագիրք՝
կարմիր: ՏՈՂ՝ 17, 18 (183ա-214բ):

ԿԱԶՄ՝ կաշի, միջուկը՝ տախտակ:

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ - Ճակատագարդ՝ 84ա, 183ա: Զարդագիր՝
թռչնագիր՝ 1ա:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ - Աւետարան³⁴: [ԱԲ] (վջ): Երկաթագիր:
Կարդալ՝ Յովհ.ԺԸ., 35:

ՎԻՃԱԿ՝ բաւարար.նորոգուած Ժէ.դ., վերակազմուած՝ աւելի ուշ: Վերջից
թափուած:

Բովանդակութիւն

Ա.1ա-83բ [Առակք Սողոմոնի]

ա. 1ա-24ա Առակ Սողոմոնի - Ճանաչէ (այսպէս) զիմաստութիւն եւ
զխրատ...(Ա., գլ. Ա.-ԻԴ.):

բ. 24ա-69բ Առակք Սողոմոնի[h] - Որդի իմաստուն ուրախ առնէ
զհայր...(Բ., գլ. Ա.-ԻԴ.):

գ. 69բ-83բ [Առակք Սողոմոնի] - Առակք Սողոմոնի [ան]քնինք³⁵, զոր
գրեցին բարեկամք Եզեկիա արքա Հրէաստանի... (Բան երկրորդ, գլ. ԻԴ):

³¹ Գր. Մաքսուդյանի նկարագրությունը փոփոխել, հարմարեցրել ենք Մաշտոցյան
Մատենադարանի «Մայր ցուցակ ձեռագրացի» նկարագրություններին ներկայացվող
պահանջներին:

³² Խորագիրը թողել ենք նույնը. այսօրինակ խորագրերը, ձեռագրերի
նկարագրությունների ներկա սկզբունքներից ելնելով, կարելի էր վերնագրել
«Ժողովածու» կամ «Մասունք Աստուածաշնչի և Գրիգոր Նիսացի. Մեկնութիւն
Երզոց Երզոյն» ձևերով: Կետադրությունը հարմարեցրել ենք ժամանակակից
հայերենի պահանջներին:

³³ Ներկա սկզբունքներից դուրս է հետագա սեփականատիրոջ անունը
նկարագրության սկզբնամասում, ինչպէս այստեղ, հիշատակելը, սակայն թողել ենք
նույնը:

³⁴ Ցավալիորեն պատահիկ- պահպանակի գրչության ժամանակը նշված չէ:

Բ. 83բ-112ա Ժողովող.Բան Ժողովողի՝ որդւոյ Դաւթի թագաւորի – Ունայնութիւն ունայնութեանց. ասաց Ժողովողն...

Գ.112ա-27ա Երգ երգոց Սողովմունի – Հարսն ասէ զայս ինչ.Համբուրեսցէ զիս ի համբուրից բերանոյ իւրոյ...եւ կամ որթոց եղանց ի վերա[յ] լերանց խնգաբերաց (Գիտացի զի՝ չիք)³⁶:

Դ.127ա-83ա Իմաստութիւն Սողովմունի – Սիրեցէք զարդարութիւն ոյք դատիք գերկիր...

Ե.183ա-214բ Գրիգորի Նիսաց[ւ]ն[յ] Մեկնութիւն Երգ երգոցի – Բան ԱռՀարսն ասէ.Համբուրեսցէ զիս ի համբուրից բերանոյ իւրոյ...Նոյնպէս եւ զլսելի վայրապար դարձուցին եւ զայլ:

Յիշատակարան գրչութեան ժամանակի

69ա-70ա [Ո]վ ընթերցողք, յորժամ ի ձեռս ա[ն]նուք յաղագս աւգտութեան, յիշեսցիք յաղաւթս:

83բ Ով եղբարք, աղաչեմ զձեզ, որ զԱստուած ողորմին ասէք գծողի՝ սուտանուն արեղա[յ]ի Յոհաննէսի:

111բ-2ա Ժողովող.Ով որ ընթեռնուք զտառս Աստուածաշունչս, եւ ճաշակիք յայսմ յոգնահաւանեան սեղանոյս եւ զսոյն ընդունիք եւ զԲ.եղբարքն իս՝ զՍուգիասն եւ զԱնդրէասն, յիշեսցիք յաղաւթս ձեր, եւ զանպիտան եւ զսուտանուն գծողս՝ Յոհաննէս արեղա[յ], եւ Աստուած զձեզ յիշէ.ամէն:

126բ-7ա Ով եղբարք, ընթերցողք Աստուածաշունչ գրոցս, աղաչեմ, յիշեսցիք յաղաւթս ձեր զսուտանուն արեղայ զՅոհաննէս:

143բ-4ա Վա՛յ ինձ, վա՛յ, եւ եղուկ յիմարութեանս, որ չեմ ի հասկանալ զպատգամս իմաստնոյն, որք ընդ մեզ խաւսի զճառս իմաստնոց:

179ա Զմեղապարտ զՅոհաննէս, որ տկար անձամբ գրեցի, յիշեսցիք յաղաւթս ձեր:

179բ-81ա Ուղղեալ է զարինակս զայս յԱղեքսանդ[ր]ացոց եւ յԵրուսաղէմացոց արին[ակէ]³⁷:

Փառք...³⁸Զի մի բնութիւն ասել՝ գերիսն դաւանենք ըստ անձնաւորութեան ղիմաց, եւ գերիսն՝ խոստովանել զմի բնութիւն բնութեան³⁹ նոցուն: Ըանաչեմք յամենայն գոյից արարածոց իւրոց յերկնաւորաց անմահական

³⁵ Տպ. այսպէս. «Առակք Սողովմունիան քնինք...»:

³⁶ Տպ. չիք

³⁷ Տպ. արինէ: Լրացումներն անում ենք ըստ ՄՄ Հ⁴բ 76 ձեռագրի:

³⁸ Ծավալի անհարկի ուռճացումից խուսափելու նպատակով այստեղ չենք գետեղում ամբողջ հիշատակարանը, հատկաձը տես Գր. Մաքսուդյան, Նկարագրություն, էջ 252-253: Նույն ՄՄ Հ⁴բ 76. տես Յիշք. ԺԴ., Ա., էջ 330:

³⁹ Տպ. զմութիւն բնութեան *փյւ*. զմի բնութիւն բնութեան

դասուց եւ ի ստոր, եւ կացելոցս⁴⁰ մարդկան՝ բանական մահկանացուածս, նաեւ յայնց ոմանց, որ տարորոշ գոլ ի սոցունց, յաւիտեանս ամէն:

Գրեցի եւ հաստատեալ կառուցի, աւժանդակութիւն առեալ ի վերին գաւրութենէն, ի դէմս քարտենի, ըստ իմումս կարողութեան զբանս Աստուածայնոյս Սողոմովնի, աստուածային հոգւով առյցեալ, ի թուականութեան Հայկազեան տումարիս ՉԿ.(1311): Ես՝ Յոհաննէս անուն⁴¹, ի մանկունս եկեղեցւոյ, գրեցի ըստ իմում կարողութեան, եւ կարգեցի ի դէմս քարտենի, ի գաւառիս Բզնունեաց կոչեցեալ՝ յանուանեալ⁴² անապատիս Արծկէու⁴³, սիւրալի եւ պայծառ անուամբ շքեղացեալ, ընդ հովանեաւ սուրբ եկեղեցւոյս, որ անւամբ յորջորջի Սուրբ Սիովն, եւ այլ սրբոց եւ Սուրբ Մքանչեղագործի, եւ պայծառ անւամբ կենսաբեր Սուրբ Նշանի: Եւ ես՝ Մէլիքշահ⁴⁴ անուն ըստ աւագանի կոչելոյ, եւ ապա ի ձեռնադրութեան փոխելոյ անուն Յոհաննէս, որ չեմ իսկ արժանի անուան քահանայութեան, այլ յուսամ յողորմութիւն Աստուծոյ, միթէ⁴⁵ համարի թիւ վարձկանաց իւրոց: Ով որ հանդիպիք՝ ընթեռնուլ եւ մտաւք ճաշակեալ յայսմ յոգնաւիամեստն սեղանիս, որք է ի կրթութիւն մանկանց Նոր Սիովնի, եւ զսոյն ընդունիք եւ յիշատակի արժանի առնէք աղաթիւք առ Քրիստոս, յայսն անձին իմոյ գտածանելիս զանազան կրիւք ներհակաց աստուածային կամաց:

Արդ, աղաչեմ, յորժամ ի ձեռս առնուք գտառս Աստուածաշունչս, յիշեսցիք զերիս եղբարսն իմ՝ զԱռաքիասն եւ զԱնդրեասն եւ զՇահմէլէքն⁴⁶, եւ զքոյրն իմ զԲանգիսաթուն եւ զԾնաւորքն իմ՝ զԼուսիկ⁴⁷, զփոխեցեալքն ի Քրիստոս յոյսն ամենեցուն. որ պարգեւատու է, վարձս բարեաց եւ բազմապատիկս երկնային պարգեւաւք առյցեալս հաստուցէ նոցին ըստ տրոց փոխարինին, արդար դատաւորն Քրիստոս, յորժամ գայցէ փառաւք Հայր եւ Հոգւոյն հանդերձ հրեշտակաւք:

⁴⁸182բ (սիւնակ Ա., առաջին չորս տողերը եղծուած) [Բայց գրեցաւ սա ի սաստիկ եւ յընդիր արլինակէ⁴⁹, ի վաղուց հետէ [ստ]ուգեալ եւ ճշմարտեալ ի նոյն պայմանի՝ բանիւք եւ բառիւք եւ տառիւ անթերի եւ անտալ գոլով, զի

⁴⁰ Տպ. սխալ է վերականգնել՝ կա[մ մեր]ոցս փիւ. կացելոցս

⁴¹ ՄՄ Հ⁴⁸բ 76 Ես՝ անալիտանս ի մանկունս եկեղեցւոյ Յոհաննէս անուն

⁴² ՄՄ Հ⁴⁸բ 76 չիք

⁴³ Շարունակությունը՝ մինչև 182բ «...ընդիր արլինակէ»՝ տարբեր

⁴⁴ Տպ. Մէլիք Շահ

⁴⁵ Տպ. մի թէ

⁴⁶ Տպ. Շահ Մէլէքն

⁴⁷ Տպ. փոքրատառ

⁴⁸ Այս հատվածից՝ համահունչ ՄՄ Հ⁴⁸բ 76-ի հետ

⁴⁹ Լրացնում ենք ըստ ՄՄ Հ⁴⁸բ 76-ի: Տպ. յըն[դար]ինակէր փիւ. յընդիր արլինակէ

թէպէտ եւ յաղագս մերոցս կարեաց ի սոյնս ձեռնարկեցաք, սակայն եւ առաւել եւս վասն արինակի եւ գաղափար այլոց լինելով սա՝ ըստ յարմարութեան բանիցն:

Զի ամենայն ոք⁵⁰ համարձակ գայս առցէ առ ի յայլ առանց երկբայութեան եւ կասկածանաց, եւ զմեզ, եւ զծնողսն մեր ի խորոց սրտէ յիշեսցէ (1 տող չիք, լրացնում ենք՝ առանց ստացողի անուն հիշատակելու) [որ ստացաւ զգիրքս ի խալալ արդեանց իւրոց, յիշեսցիք⁵¹՝ առ բերք բարեաց տուողն՝ Քրիստոս Յիսուս, որում յաւէտ փափագիմք հոգւովն ի⁵² տեսութեան, ի Հայր եւ ի Սուրբ Հոգի նոցին, որ է արհնեալ եւ փառաւորեալ ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյն յերիս յաւիտեանս յամենայն գոյից արարածոց իւրոց]⁵³:

Յիշատակարան հետազայի

182բ (նորոգողի, 1641 թ.) Վերստին նորոգեցաւ Աստուածաշունչ գիրքս ձեռամբն տէր Պետրոս քահանային՝ ի վայելումն Աւետիք դպրին, եւ սա[յ] յիշատակ է տէր Պաղտասար ցանկալի եւ աստուծոյ քահանային: Ով որ կարդա[յ] կամ արինակէ, Աստուած ողորմի ասէ իւրն եւ իւր նախնեաց, եւ ձեզ ողորմի Տէր մեր Յիսուս Քրիստոս ի միւս անգամ⁵⁴ գալստեանն. ամէն: Հայր մեր որ յեր՝:

Կազմեցաւ գիրքս ի թվականիս հայոց ՌՂ.(1641)՝ ի դուռն Բարձրահայեաց Սուրբ Աստուածածնին, ի մայրաքաղաքն Եդեսիեա:

|. |||:|:: |:: |||:|:: ||. |||:|:: |:: |. |||. |||:|. |. |||:|. (վերջին երկու միավորը՝ պատվի նշանով. պրոնակետային ծածկագիր՝ «ԱԻԵՏԻՔ ԾԱՌԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ»):

Օգտագործված գրականություն

Ձեռագիր սկզբնաղբյուրներ

1. Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. Հ^մ 76:
2. Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց մատենադարանի ձեռ. Հ^մ 1925, Մաշտոցյան Մատենադարանի դրսի ժապավեն Հ^մ 8:

Տպագիր սկզբնաղբյուրներ

3. Ակինեան Ն., Սուրբ Գրքի հայերէն թարգմանութիւնը. - «Հանդէս ամսօրեայ», Հայագիտական ուսումնաթերթ, Թիւ 10-12, Հոկտեմբեր-դեկտեմբեր, ԽԹ.տարի, 1935:

⁵⁰ Տպ. որ *փ/ւ*. ոք

⁵¹ Տպ. վերականգնված հատվածը՝ չիք

⁵² Տպ հոգւովն ի *փ/ւ*. հոգւով նմին ի

⁵³ Տպ. վերականգնված հատվածը՝ չիք

⁵⁴ Տպ. գրված է առանձին

4. Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց. ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց՝ ի հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ: Նորոգապէս ի լոյս ընծայեալ յընտրելագոյն գրչագիր գաղափարէ՝ համեմատութեամբ այլեւայլ օրինակաց՝ հանդերձ կարելոր ծանօթութեամբք բնաբանին: Յաշխատասիրութենէ տեառն Հ. Յովհաննու Զօհրապեան վարդապետի, ի Վենետիկ, 1805. ՌՄԾԴ.:
5. Coulie Bernard, Armenian Manuscripts, Catalogues, Collections, Libraries, 2nd Revised Edition, Turnhout, Brepols, 2020:
6. Գօլանճեան Սուրբն, Յովհաննէս վարդապետ Հիւսեան, Բաբգէն աթոռակից կաթողիկոս Կիւլէտերեան, Գեորգ Տէր-Վարդանեան, Եղեռնը եւ մեր ձեռագրերի կորուստներն ու փրկութիւնները, Հրատարակութեան պատրաստեց՝ Գեորգ Տէր-Վարդանեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2015:
7. Դիւցանական Ուրֆան եւ իր հայորդիները, Աշխատասիրեց՝ Արամ Սահակեան, Վերահրատարակութիւն, Անթիլիաս, 2014:
8. ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, Կազմ.՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1950:
9. Կարապետյան Ս., Հայաստանի պատմություն, Հատոր Գ., Արծկէ, «Բյուրակն» հրատ., Երևան, 2018:
10. Հայերէն ձեռագրերի ԺԵ. դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.), Հատոր Գ., Կազմեց՝ Վազգէն Հակոբյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984:
11. Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ.դար, Մասն Ա (1301-1325 թթ.), Կազմողներ՝ Լ.Խաչիկյան, Ա.Մաթևոսյան, Ա.Ղազարոսյան, «Նաիրի» հրատ., Երևան, 2018:
12. «Հայկական Սովետական հանրագիտարան», Հատոր 2, Արգիշտի-Գեղերվան, Երևան, 1976:
13. Հովսէփյան Լ., Երգ երգոցը և Գրիգոր Նարեկացին, «Բանբեր Մատենադարանի». - Հ^տ 30, Երևան, 2020:
14. Մաթևոսյան Ա., Մեծփավանքի գրչության կենտրոնը (ԺԲ.-ԺԵ.դդ.), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997:
15. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Հատոր Ա., Կազմեցին՝ Օ.Եգանյան, Ա.Զեյթունյան, Փ.Անթարյան, Խմբագրությամբ՝ Ա.Մնացականյանի, Օ.Եգանյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984:
16. Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. վեցերորդ, Կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1972:
17. Մագսուդեան Գր., Նորահայտ հայերէն ձեռագիր մատեան մը յԱմերիկա. - «Սիոն», ԽԲ.տարի - նոր շրջան, Մայիս-յունիս, Թիւ 5-6, 1968:
18. Ոսկեան Հ., Երգ երգոցի առաջին եւ երկրորդ թարգմանութիւնները, Ուսումնասիրութիւն եւ բնագրեր, Մխիթարեան տպ., Վիեննա, 1925:
19. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002:

Лилит Овсепян, Татевик Манукян

Что скрывают рукописи?

Об описании рукописи, опубликованной в ежемесячном журнале "Сион"⁵⁵

Заключение

Ключевые слова и выражения: описание рукописи, переписчик, Пустыня Арцке, оригинал рукописи, рукописные утраты, колофон, докилийское редактирование Библии, ежемесячный журнал «Сион», Григор Максудян, Песнь Песней, копия.

Г. Максудян опубликовал в 1968 году в ежемесячном журнале «Сион» описание рукописи 1311 года, дополняющую рукописное наследие средневекового Арцке, переписанную переписчиком Ованесом в «Пустыне Арцке» под названием «Недавно обнаруженная в Америке армянская рукопись». Рукопись содержит книги Соломона Мудрого: Притчи, Экклезиаст, Песнь Песней, Премудрость, а также произведение Григора Нюсацци «Толкование Песни Песней». В статье данное описание рассматривается как важный источник, равноценный рукописи, для изучения письменной среды Арцке.

Ованес в 1317 году, в той же пустыне Арцке, сделал точную копию той же рукописи (памятные записи и содержание совпадают), которая является рукописью номер 76 Матенадарана имени Маштоца. Текстолого-кодикологический сравнительный анализ этих двух рукописей из Пустыни Арцке проявляет новые детали как о переписчике Ованесе, так и относительно писательской среды Арцке в начале XIV века; становятся известны мирское имя переписчика и имена его родственников, о которых в памятной записи рукописи номер 76 упоминаний нет.

В статье подчеркивается тот факт, что Соломоновы Притчи, Экклезиаст, Песнь Песней и Премудрость были скопированы в отдельной рукописи как уникальное явление копирования библейского текста, чем обосновано наличие в этом тексте заслуживающих внимания разночтений, отсутствующих в считающихся авторитетными чтениях Библии, опубликованных Ованесом Зограбяном в 1805 году, и могут способствовать будущей работе по составлению критического текста Библии.

⁵⁵ Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке РА в рамках научного проекта № 21Т-6А277.

Lilit Hovsepian ,Tatevik Manukyan

What do the Manuscripts hide?

About the description of a Manuscript published in the "*Sion*" magazine⁵⁶

Conclusion

Key words and expressions: description of the manuscript, copyist, Artske, original manuscript, handwritten losses, colophon, pre-Cilician editing of the Bible, "*Sion*" magazine, Krikor Maksoudian, Song of Songs, copy.

K. Maksoudian published in 1968 in the magazine "*Sion*" a description of the manuscript of 1311, supplementing the manuscript heritage of the medieval Artske, copied by the scribe Hovhannes in the "Desert of Artske" under the title *Recently discovered Armenian manuscript in America*. The manuscript contains the books of Solomon the Wise: Proverbs, Ecclesiastes, Song of Songs, Wisdom, as well as the work by Grigor Nyusatsi *Interpretation of the Song of Songs*. The article considers this description as an important source, equivalent to a manuscript, for the study of the written environment of Artske.

In 1317 the Hovhannes, in the same Artske desert, made an exact copy of the manuscript (colophons and contents coincide), which is the manuscript number 76 of the Mashtots Matenadaran. The comparative textological-codicological analysis of these two manuscripts from the Artske Desert reveals new details both about the copyist Hovhannes and about the writing environment of Artske at the beginning of the 14th century; the worldly name of the copyist and the names of his relatives become known, of whom there is no mention in the colophon of the manuscript number 76.

The article highlights the fact that Solomon's Proverbs, Ecclesiastes, Song of Songs and Wisdom were copied in a separate manuscript as a unique phenomenon of copying the biblical text, which justifies the presence in this copied text of noteworthy discrepancies that are absent in the readings of the Bible, considered authoritative, published by Hovhannes Zohrabian in 1805 year, and may contribute to a future work on the composition of the critical text of the Bible.

Խմբագրություն է ուղարկվել 19.07.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 05.08.2023թ.

Հրապարակման է ներկայացվել 29.09.2023թ.

⁵⁶ The work was supported by the Science Committee of RA, in the frames of the research project № 21T-6A277.